

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչության և Բելառուսի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչությունը և Բելառուսի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեն, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով սպորտային կապերը որպես երկու երկրների ժողովուրդների միջև փոխըմբռնման և բարեկամության ամրապնդման միջոց զարգացնելու ձգտմամբ, առողջության կոփման և սպորտով պարապելու համար երկու երկրների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցների փոխադարձ օգտագործման պայմանների ստեղծմամբ և հաստատելով իրենց նվիրվածությունը օլիմպիական խարտիայի նպատակներին և սկզբունքներին, ընդունեցին համագործակցության հետևյալ սկզբունքները.

Հոդված 1

Կողմերը կնպաստեն մարզական կազմակերպությունների բարձրաստիճան ղեկավարների փոխադարձ հանդիպումների կազմակերպմանը՝ երկկողմ համագործակցության համար խորհրդակցություններ անցկացնելու նպատակով:

Կողմերը, մարզական կապերի համաձայնեցման նպատակով, ըստ պայմանավորվածության՝ կհամագործակցեն մարզական կազմակերպությունների և ֆեդերացիաների ղեկավարների պատվիրակությունների փոխանակման, ինչպես նաև միջազգային սպորտային և օլիմպիական շարժման հիմնախնդիրների հետ կապված փոխադարձ խորհրդակցությունների անցկացման գործում:

Կողմերը կհամագործակցեն երկու երկրներում կազմակերպվող մրցումների և միջազգային մարզական միջոցառումների երկկողմ մասնակցության հարցում:

Կողմերը կնպաստեն ցանկալի մարզաձևերի թիմերի և ակումբների փոխանակմանը՝ մարզական հավաքների, համատեղ մարզումների, ընկերական և մրցախաղային հանդիպումների կազմակերպման նպատակով:

Կողմերը մասնակցություն կցուցաբերեն երկու երկրներում անցկացվող սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հարցերով գիտական սեմինարներին:

Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, կհամագործակցեն ցանկալի մարզաձևերի մարզիչների և մասնագետների փոխանակման գործում:

Հոդված 2

Կողմերն անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն սպորտի և ֆիզիկական կուլտուրայի, սպորտային գիտության և բժշկության բնագավառի ինֆորմացիայի, ինչպես նաև բարձրակարգ մարզիկների և սպորտային ռեզերվի պատրաստման փորձի փոխանակման ուղղությամբ:

Կողմերը կնպաստեն երկու երկրների մարզական ակումբների, կառույցների, մարզիկների պատրաստման կենտրոնների, ֆիզիկական դաստիարակության համակարգի աշխատողների պատվիրակությունների, մարզական և մանկավարժական անձնակազմի պատրաստմանը:

Կողմերը, մյուս Կողմի պահանջով, անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն գիտական աշխատությունների, ծրագրերի, ուսումնամարզական գրքերի, ձեռնարկների, հրատարակչությունների և ֆիլմերի, ինչպես նաև տարբեր մարզաձևերի վերջին նվաճումների, մարզակառույցների շինարարության և շահագործման, մարզագույքի և սարքավորումների արտադրության բնագավառում տեղեկության փոխանակումն ապահովելու ուղղությամբ:

Կողմերը (փոխադարձ պայմանավորվածությամբ) կապահովեն իրենց բուհերում տարբեր մարզաձևերի մարզիչների, գիտամանկավարժական կադրերի դասախոսների պատրաստումն ու վերապատրաստումը:

Հոդված 3

Կողմերն անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն՝ աջակցելու Կողմերից յուրաքանչյուրի՝ մարզահագուստի, սարքավորումների և գույքի նկատմամբ պահանջարկի ուսումնասիրմանը և կարիքների բավարարմանը և կնպաստեն սպորտային ապրանքների, մարզագույքի, սարքավորումների արտադրության համատեղ ձեռնարկությունների կառուցմանը և արտադրանքի իրացմանը:

Հոդված 4

Կողմերը կարծիքներ և առաջարկություններ կփոխանակեն, ինչպես նաև կհամակարգեն իրենց գործունեությունը համաշխարհային օլիմպիական և մարզական շարժման հարցերում:

Հոդված 5

Կողմերը, հաշվի առնելով իրենց շինարարական և արտադրական հզորությունները, կհամագործակցեն մարզակառույցների շինարարության ու վերակառուցման գործում:

Հոդված 6

Կողմերը որոշեցին, որ սույն Համաձայնագրի հոդվածներում շարադրված՝ երկու պետությունների միջև մարզական համագործակցության ձևերը կիրականցվեն երկու պետությունների համար փոխադարձ ընդունելի պայմաններում:

Մարզական պատվիրակություններ, թիմեր, մարզիչներ, գիտնականներ, մասնագետներ, առանձին մարզիկներ և այլ անձինք գործուղող երկիրը վճարում է մինչև ընդունող երկրի մայրաքաղաք հասնելու և վերադառնալու հետ կապված ճանապարհածախսը:

Ընդունող Կողմն իր վրա է վերցնում ժամանման հետ կապված բոլոր ծախսերը /տեղավորում, պետության տարածքում ուղևորություն մինչև մրցումների վայր, անհրաժեշտ բժշկական սպասարկում, սնունդ, և, անհրաժեշտության դեպքում, թարգմանչի տրամադրում/:

Կողմերը պայմանավորվեցին, որ մարզական թիմերի, մարզիչների, գիտնական մասնագետների, առանձին մարզիկների և այլ անձանց՝ ընդունող երկիր ժամանելը և այդ երկրում ծրագրով նախատեսվածից ավել օրեր մնալը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է համաձայնեցվի երկու երկրների համապատասխան ֆեդերացիաների և մարզական այլ կազմակերպությունների միջև:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրը չի շոշափում պայմանավորվող Կողմերի պարտավորությունները երրորդ երկրի նկատմամբ, չի բացառում սպորտի և ֆիզիկական կուլտուրայի ոլորտում մարզական համագործակցության այլ՝ փոխադարձ ընդունելի ձևեր, և, անհրաժեշտության դեպքում, կարող են ձևակերպվել լրացուցիչ արձանագրություններով և համաձայնագրերով, որոնցով ձշտվում են համագործակցության ձևերը:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և կմնա ուժի մեջ այնքան ժամանակ, մինչև Կողմերից մեկը վեց ամիս առաջ գրավոր տեղեկացնի մյուս Կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ իր որոշման մասին:

Սույն Համաձայնագիրը կնքված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում 1993 թվականի հոկտեմբերի 26-ին, երեք բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ ունեն հավասար ուժ:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 26-ից: